

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Աբովյանի Ն.Վանյանի անվան N5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում հետևյալ թափուր աշխատատեղերը համալրելու համար.

Ռուսերենով ուսուցմամբ տարրական դասարանի դասվարի 1 /մեկ/ աշխատատեղ /23դ/ժ/

«Ռուսաց լեզու և գրականություն» ուսումնական առարկայի ուսուցչի 1 /մեկ/ աշխատատեղ /3 դ/ժ /

«Ֆիզկուլտուրա» ուսումնական առարկայի ուսուցչի 2 /երկու/ աշխատատեղ /24 դ/ժ. ցանկալի է առարկան ռուսերենով դասավանդելու իմացությունը/:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. Դիմում/Ձև 1/, մեկ լուսանկար՝ 3X4 չափի,
2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ/դիպլոմ/,
3. Անձը հաստատող փաստաթուղթ,
4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը/առկայության դեպքում/,
5. Ինքնակենսագրություն(Ձև 5),
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր/առկայության դեպքում/,
9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերն ընդունվում են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կայքէջում հայտարարությունը հրապարակվելու օրվանից՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում մինչև **մարտի 15-ը** ներառյալ, ամեն օր՝ ժամը 10⁰⁰-15⁰⁰-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **մարտի 21-ին՝ ժամը 14:00** -ին, Կոտայքի մարզի «Աբովյանի Ն. Վանյանի անվան N5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում.

Հասցե՝ ք. Աբովյան Ռոսիա փ. 8/4

Էլ.հասցե՝ abovyan5@schools.am

Տեղեկությունների համար զանգահարել՝ (060)740714 կամ (095)260622 հեռախոսահամարներով:

ՏՆՕՐԵՆՈՒԹՅՈՒՆ

28.02.2022թ.